




## Սոցիալ-հոգեբանական բարեկեցություն




## Անվտանգություն եւ բռնություն



## Մասնակցություն եւ ազդեցություն



## Երեխայի իրավունքների իմացություն



Հետազոտությունն ի սկզբանե մշակվել է «Սեյվ դը չիլդրեն» Շվեդիայի կողմից, որը նմանատիպ հարցում կատարել է Շվեդիայում և նաև աջակցել է տարածաշրջանում մի շարք այլ երկրներում նման հարցման իրականացմանը: Հետազոտության մեթոդաբանությունը ադապտացվել է հայաստանյան համատեքստին համապատասխան:

Այս ինֆորաֆիկան ստեղծվել է Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի ուսանողների կողմից՝ հատուկ աշխատարանի շրջանակներում:

## Անվտանգություն և բռնություն

### Հոդված 19 (Պաշտպանություն ցանկացած տեսակի բռնությունից)

Երեխաներն ունեն ֆիզիկական և հոգեբանական ցանկացած տեսակի բռնությունից, պաշտպանված լինելու իրավունք: Պետություններն ապահովում են երեխաների ինքնազրկ և պաշտպանում են նրանց ծնողների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից երեխային բռնության, կոպիտ վերաբերմունքի կամ անուշադրության ենթարկվելուց:

## Սոցիալ-հոգեբանական բարեկեցություն

### Հոդված 6 (Կյանք և զարգացում).

Երեխաներն ունեն կյանքի իրավունք: Մասնակից պետությունները պետք է ապահովեն երեխաների գոյատևումը և առողջ զարգացումը:

### Հոդված 31 (Հանգիստ, ժամանց և մշակույթ).

Երեխաներն ունեն հանգստի, ժամանցի և մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու և արվեստով զբաղվելու իրավունք:

## Երեխաների իրավունքների իմացություն

### Հոդված 17 (Տեղեկատվության մատչելիություն)

Երեխաներն իրավունք ունեն ստանալ տեղեկատվություն, որը կարևոր է իրենց առողջության և բարեկեցության համար:

### Հոդված 42 (Իրավունքի իմացություն)

Մասնակից պետությունները պարտավորվում են Կոնվենցիայի սկզբունքների և դրույթների մասին լայնորեն տեղեկացնել ինչպես մեծահասակներին, այնպես էլ երեխաներին: Մեծահասակներն էլ իրենց հերթին պետք է օգնեն երեխաներին տեղեկանալու իրենց իրավունքների մասին:

## Մասնակցություն և ազդեցություն

### Հոդված 3 (Երեխաների լավագույն շահ).

Երեխաներին վերաբերող որոշումներ կայացնելիս երեխայի լավագույն շահին պետք է առաջնահերթ ուշադրություն դարձվի: Բոլոր մեծահասակները պետք է ձեռնարկեն քայլեր, որոնք լավագույն լուծումն են երեխաների համար: Որոշումներ ընդունելիս մեծահասակները պետք է մտածեն՝ ինչպես են դրանք անդրադառնալու երեխաների վրա: Այս ամենը հատկապես վերաբերում է բյուջեին, քաղաքականությանը և օրենսդիր մարմիններին:

### Հոդված 12 (Հարգանք երեխաների հայացքների նկատմամբ).

Երբ մեծահասակները կայացնում են երեխաներին առնչվող որոշումներ, երեխաներն ունեն իրենց կարծիքը ազատ արտահայտելու իրավունք, որը պետք է հաշվի առնվի:

## Երեխաների կարծիքով...

«Երեխաների կարծիքով» համազգային հարցումը բարձրաձայնում է երեխաների մտքերն իրենց վերաբերող որոշակի խնդիրների վերաբերյալ: Հարցումն իրականացվել է հարցաթերթիկների և ֆոկուս խմբային քննարկումների միջոցով՝ Հայաստանի տասը մարզերի և Երևանի մոտ 1200 երեխաների շրջանում: